



## HFHS Հիվանդի վճարման և հավաքագրման քաղաքականություն

### Նախապատմություն

Henry Ford Health System-ը (HFHS) ամեն հիվանդի վերաբերվում է արժանապատվությամբ, հարգանքով և կարեկցանքով: Հիվանդները կարող են HFHS-ին դիմել նրա մատուցած ծառայությունների դիմաց արդար գնագոյացման համար, ինչպես նաև հիվանդներին ցուցաբերած օժանդակության համար՝ օգնելու գտնել տարբերակներ՝ իրենց բժշկական ծախսերը կառավարելու համար:

Բոլոր հիվանդներն իրավունք ունեն ստանալ շտապ բժշկական օգնություն՝ անկախ հիվանդների վճարունակությունից կամ նախորդ այցելություններից որևէ չմարված մնացորդից:

Ակնկալվում է, որ հիվանդները և/կամ երաշխավորները ցանկացած ֆինանսական պարտավորության համար պատասխանատու են HFHS-ին մատուցված բժշկական ծառայությունների համար: Պատասխանատվությունն այնպիսի գործողությունների միջոցով է ներկայացվում, ինչպիսիք են HFHS-ին ճշգրիտ և ամբողջական տեղեկությունների տրամադրումը, ժամանակին վճարումը, վճարման ժամանակացույցով համաձայնեցված համապատասխանությունը, և բժշկական ապահովագրությամբ հաշվառումը, լինի դա գործատուի կողմից տրամադրված, անհատական կամ կառավարության աջակցմամբ ծրագրեր, ինչպիսիք են՝ Medicare (Մասեր A, B և D, կամ C) և Medicaid ծրագրերը կամ որևէ այլ երրորդ կողմ հանդիսացող վճարող, ինչպես կիրառելի է:

### Քաղաքականություն

Henry Ford Health System-ն (HFHS) իր մատուցած ցանկացած ծառայության ֆինանսական պատասխանատվությունն իր հիվանդներին է փոխանցում ժամանակին և հավաքագրումը կատարում է պրոֆեսիոնալ և կարեկից ձևով: Մատուցված ծառայությունների դիմաց հավաքագրման գործընթացը սկսվում է հանդիպումը նշանակելու ժամանակ կամ ծառայությունները մատուցելիս, և ավարտվում է վճարվելիք մնացորդների վճարը ստանալուց հետո: HFHS-ն իրավունք է վերապահում հավաքագրել բժշկական խնամքի ապահովման հետ կապված ցանկացած դեբիտորական պարտք:

### Սահմանում(ներ)

Արտահերթ հավաքագրման գործունեություն (ECA)՝ թույլատրելի ECA-ները ներառում են՝

- Պարտապանի դեմ իրավական կամ դատական գործ
  - Անհատի բանկային հաշվի կամ այլ անձնական գույքի կալանք կամ առգրավում
  - Անհատի դեմ քաղաքացիական գործի հարուցում
- Անհատի պարտքի վաճառք երրորդ կողմին
- Ծանուցում վարկային գործակալություններին

## **Ընթացակարգ**

Նախքան հիվանդին քաղվածքն ուղարկելը հավաքագրումը կարող է ներառել, սակայն չսահմանափակվել հետևյալով.

- Չփոխհատուցվող մնացորդների կամ համավճարների վճարում
- Ծառայությունների համար կանխավճար կամ ավանդներ

HFHS-ը կամ HFHS-ի հետ պայմանագրված մատակարարները չեն զբաղվի Արտահերթ հավաքագրման գործունեություն (ECA) համարվող որևէ հավաքագրման գործունեությամբ, մինչև հիվանդը չավարտի Patient Financial Assistance Program-ի (Հիվանդի ֆինանսական օժանդակության ծրագիր, PFAP) որակավորման և ծանուցման ժամանակահատվածը: HFHS-ն ողջամիտ ջանքեր կգործադրի PFAP առնչությամբ հիվանդների հետ հաղորդակցվելու և որոշելու՝ արդյոք հիվանդն իրավասու է ֆինանսական օժանդակություն ստանալու համար: Ողջամիտ ջանքերը կարող են ներառել՝

- PFAP-ի մատչելիության մասին հիվանդին տեղեկացնելը ծառայությունը մատուցելիս կամ իրավասության և ստուգման ծառայության ընթացքում
- PFAP-ի մատչելիության վերաբերյալ տեղեկության առաքում ամսական քաղվածքով
- Զրուցելը հիվանդի հետ՝ չմարված մնացորդները լուծելու համար

Եթե հիվանդը ֆինանսական օժանդակություն ստանալու համար համարվում է ոչ իրավասու և HFHS-ն ողջամիտ ջանքեր գործադրելուց հետո անկարող է հավաքագրել վճարները, հաշիվը կարող է դասակարգվել որպես «Վատ պարտք» և ուղարկվել արտաքին հավաքագրման: Հետևյալ հաշիվները չեն կարող հավաքագրման գործակալություն ուղարկվել.

- Հաշիվներ, որոնք ընկնում են սնանկության ներկայացման ժամանակահատվածում
- Հաշիվներ, որոնց երաշխավորը մահացած է
  - Փորձեր կարվեն որոշելու՝ արդյոք \$1,000-ից ավելի մնացորդի չափով կտակի պաշտոնական վավերացում գոյություն ունի
- Պաշտոնական վճարման պլանին հավատարիմ հաշիվներ

## **Առաջնային տեղադրում**

Հաշիվը կարող է վերագրվել արտաքին հավաքագրման, եթե այն համապատասխանում է հետևյալ չափորոշիչներից մեկին կամ մի քանիսին.

- Ինքնավճար մնացորդը չի վճարվում նախնական վճարման կամ հիվանդի հետ հաղորդակցման ամսաթվից ամենաքիչը 120 օրվա ընթացքում, եթե բոլոր ողջամիտ հետևողական ջանքերը սպառվել են
- Հիվանդը/երաշխավորը տեղեկացնում է, որ մտադիր չէ վճարել հաշիվը
- Հիվանդի հետ էլ.փոստի և/կամ հեռախոսի միջոցով կապակցումն անհաջող է՝ վատ տեղեկատվության պատճառով

## **Փակում և վերադարձ**

Հավաքագրման գործակալությունները մեկ տարի հետո կփակեն կամ կվերադարձնեն հաշիվները HFHS-ին մինչև հաշիվը չհամապատասխանի հետևյալ չափորոշիչներից մեկին.

- Հիվանդը/երաշխավորը հավատարիմ է վճարման պայմանավորվածությանը
- Ակտիվ հավաքագրման կարգավիճակում

- Հաշվից հավաքագրման գործունեությունը դադարեցվել է հետևյալ պատճառով.
  - Բարեգործություն
  - Սնանկություն
  - Կտակի պաշտոնական վավերացում
  - Վիճահարույց ծառայություններ
  - Fair Debt Collection Practices Act-ով (Արդար պարտքի հավաքագրման մասին օրենք, FDCPA) սահմանված՝ հավաքագրման գործունեության որևէ այլ դադարեցում

Արտաքին հավաքագրման համաձայնագրեր

Արտաքին հավաքագրման գործակալությունների հետ բոլոր համաձայնությունները պետք է լինեն գրավոր և սահմանեն հիվանդների հետ հաղորդակցման վերաբերյալ պահանջված արձանագրությունները, ներառյալ, սակայն չսահմանափակվելով ներքոհիշյալներով.

- HFHS PFAP-ի (Հիվանդի ֆինանսական օժանդակության ծրագիր) վերաբերյալ տեղեկությունների փոխանակում
- Հավաքագրման թույլատրելի գործունեություն
- Հավաքագրման արգելված գործունեություն